չիլ 'ի դատաստանաց, և քօղով ստութեան ծածկել զիրաւունս այլոց. ապա ձեռն արկին յայլ իմն գործ դժընդակ, անհնարին յանդգնութեամբ, անհետ առնել խապառ զյիշատակս Հայոց յայրէն Մենդեան։ Նախ խորտակեալ բարձին զերկոսին կանթեղս, կախեալ 'ի վերայ Մսրոյ Տեառն մերոյ. ապա խորտակեցին զդարանն (տօլապ), եւ զարկղն Հայոց յայրի անդ, յափշտակեցին զզգեստս պատարագին եւ զայլ սպասս. որք էին 3 արծաթ խաչ, 2 ոսկեզօծ, եւ 1 ակնազարդ. 2 Սկիհ ոսկեզօծ, 2 բուրվառ, 1 արծաթ և 1 զլինձ. 1 Աւետարան արծաթապատ. զգեստ Պատարագի իւր սարօք. դիպակ ոսկեթել 'ի գոյն կարմիր, և զայլ եկեղեցական սպասս։ Լու եղեւ Գրիգորի Պատրիարքի արարք Լատինաց, եւ տարակուսեալ նորա անկաւ 'ի դրունս այլազգեաց, աղաչանօք և յորդորանօք հաճեցոյց զմիտս նոցա գրել և ծանուցանել 'ի Դուռն, և նոքա խոստացան։ Ապա առաքեաց առ դատաւորն զՊետրոս որդի Գեորգեայ իբր փոխանորդ իւր եւ ամբաստան եղեւ զտեսչէն Լատին վանաց Բեթղեհէմի, զոր տուեալ էր խորտակել զդարանն եւ զարկղն. ժողովեցան այլազգիք՝ եկն եւ տեսուչն, խնդրեաց Պետրոս դարձուցանել յետս, զոր ինչ յափշտակեալ էին Լատինք, հաճեցաւ առ այս եւ ժողովն. եհարց դատաւորն ցտեսուչն, թէ արդարեւ արարե՞ր այնպէս, որպէս ամբաստանեն Հայք. և նա համարձակութեամբ ասէ՝ ես իջուցի զկանթեղս Հայոց կախեալ յայրն Մենդեան 'ի վերայ Մսրոյն. խորտակեցի զդարանն և զարկղն, և բարձի զսպասս պաշտամանց նոցա, հրամանաւ թագաւորին Գաղղիոյ, որ ընդ իշխանութեամբ նորա եմք։ Վկայութեամբ ժողովոյն վճիռ ետ դատաւորն հատուցանել զգինս դարանին տեսուչն Լատինաց, եւ հրաման ետ Պետրոսի երթալ և վերստին դնել զդարանն եւ հաստատել 'ի տեղի իւր. առ այս երաշխաւոր կացին փոխանորդն և թարգմանն Լատինաց՝ տեսչի իւրեանց ըստ պահանջման դատաւորին. 'ի ՀԲ ՃԿմազիլ ամսոյ՝ ՌՄԱ (1621)։

Եւ յետ այնորիկ դատաւորն հանրագրութեամբ ժողովոյն այլազգեաց գրեալ զամենայն ծանոյց 'ի Դուռն. եւ ընթերցեալ զայն նախարարաց՝ ծանեան զանհնազանդու-